բատուն չէր կարող ՉՁԸ (= 1339) թուականին նրանց ողորմութեամբ նուէր տալ։ Ouvarovaի մէջ միայն թուականը ճիշդ է, բայց նուիրատուի անունը սխալ՝ Սինանոս՝ կարդացուած։

Հասիկ անունով մէկը ՉԿ (= 1311) թուին շինել է «զաuարանոցն» եւ տուել Վարագայ Սուրբ Նշանին եւ Ս. Ստեփանոսին. ժամանակի վարդապետն ու միաբանները նշանակել են չորս ժամ Քառասնից տօնին (Ցաւել. Ա. 159)։ Նուիրատուի անունը Քաջբերունին կարդացել է «Ցուսիկ», որին հետեւում է Ալիշան. իսկ Ouvarovaի մէջ դարձել է «Հասմիկ», մինչդեռ բնագիրը «Հասիկ» է ամենայն պարզութեամբ։

տէրն էր, նուիրելով Խալդինբրզալին (?) հողերը «իւր դ. հատուին» եւ ստացել է վարդապետի եւ միաբանների կողմից երկու ժամ Սուրբ Նշանի (Վարագայ) տօնին։ Արձանագրութեան տասնաւորը եղծուած է, իսկ հարիւրաւորն ու միաւորն է Ձ եւ Ե, որ սակայն մեր նախորդների կողմից միայն Ձն է նկատուած։ Սակայն մի շարք արձանագրութիւնների եւ մի կարեւոր յիշատակարանի հիման վերայ հնարաւորութիւն ունինք ոչ միայն որոշելու եղծուած թուականը, այլ եւ նուիրատուի տոհմն ու անձը։ Վահրամ Շահուռնեցու իշխանութեան կեդրոնը Վայոց ձորի Հերհեր աւանն էր, Գնդեվանքի եւ Ս. Խաչի կամ Մալիշկայի մէջ,

Պատկեր 187.

Սրբագրութեան է ենթարկուել եւ չակերտների մէջ առնուած բառը. մենք կարծում ենք գրչի սխալն է այդ եւ պէտք է կարդալ «զամարանոցն» (Ցաւել. Ա. 159, պատկ. 188)(*)։

Ասլան ափաճ իւր որդիների հետ ՉՀԵ (= 1326) թուին Ս. Ստեփանոսին եւ Սուրբ Նշանին (Վարագայ) նուիրել է հարիւր դահեկան (Ցաւել. Ա. 160), ստանալով Զատկի շաբաթը։ Այս Ասլանափան նուիրատուութիւն ունի նաեւ Զինջիրլուի Ս. Կարապետում(**)։

Տաճարի արեւելեան պատի վերայ գտնւում է Վահրամ Շահուռնեցու որդի Ուքանի արձանագրութիւնը (Ա. 161, պատկ. 189), որ Երերանի (Հերհեր)

Դալիկ թափայի ստորոտում(*)։ Իշխանութեան գլխաւոր սրբավայրն ու հոգեւոր կեդրոնն էր Ս. Սիոն կոչուած անապատը զոյգ մատուռներով, Հերհերից քիչ դէպի հիւսիս մի ձորակի մէջ։ Հարաւային մատրան վերայ գտնւում է Վահրամ Շահուռնեցու մեծ արձանագրութիւնը ՉԼԲ թուականից, ուր յիշատակութիւն կայ նաեւ մեր նուիրատու Ուքանի եւ եղբայրների մասին։ Վահրամի եղբայրն էր Ուքան, ոչ նուիրատուն, այլ նորա հօրեղբայրը, իսկ կինը Գոնցան։ Վահրամի Ուքան եղբօր դուստրն ենք համարում Թաճերին Ամիր-Հասան Ս.ի կնոջը, Պռոշի երկրորդ որդու։ Կրկին անգամ յիշատակուած են «գեղապանծ

(*) Անուան և ընթերցուածների տարբերութեան մասին տե՛ս Ցաւելուածը։

(**) Christ. Vostok. 238. մեր յօդուածը. Potomstwo Tarsaitcha i Minachathuni։

(*) Քաջբերունի, Արարատ, ճանապարհորդական նկատողութիւնք. Խա. Արարատ, 1889, 279 և շար. 321 և շար.։ Ալիշան, Սիսական, 114։ Գրի առնուած և ստուգուած նաև մեր կողմից։